



ԻՆԶՊԵՍ ԿԱՆԽՎԵՑ ԱՐԵՎԵԼԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԶՆՁՈՒՄԸ 1905-1906 ԹԹ.

Ռոսսոմի ծածկագիր նամակ-հրահանգները

Օգտվելով 1905թ. հունվարին Ռոսսաստանում սկսված հեղափոխությունից և Անդրկովկասի ցարական իշխանությունների թողնվածությունից, 1905 թ. փետրվարից կովկասյան թաթարները օսմանյան Թուրքիայի դրոմամբ սկսեցին իրականացնել արևելահայության բնաջնջման՝ վաղորդք մշակված ծրագիրը: Տեղեկանալով դրա մանրամասներին՝ ՀՅԴ Արևմտյան Բյուրոն Ռոսսոմի (Սրեփան Չորյան) գլխավորությամբ զորաշարժի ենթարկեց ողջ կազմակերպությունը՝ զենք, զինամթերք ու մարդուժ տեղափոխելով Անդրկովկաս: 1905-1906 թվականների ընթացքում Արարայան դաշտավայրում, Չանգեզուրում, Ղարաբաղում, Դարալագյազում և այլ վայրերում արչանագրած դժվարին հաղթանակներով, հայությունը ոչ միայն պաշտպանեց իր գոյությունն ու պարիվը, այլև սեփական հայրենիքին վերատիրանալու քաղաքական հայր ներկայացրեց:

Այս ամենը չեռք բերվեց արտասահմանից գաղտնի կերպով զենք ու զինամթերք տեղափոխելու, ՀՅԴ մարտական կազմակերպությանը և արևելահայ գյուղացիության մի մասին զենքի փակ դնելու միջոցով:

«ՎԷՄ» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ Երվանդ Փամբուկյանի կողմից ՀՅԴ կենտրոնական արխիվում հայրենաբերված ու վերծանված Արևմտյան Բյուրոյի ծածկագիր նամակ-հրահանգները բացահայտում են այն հսկայական կազմակերպչական աշխատանքը, որն իրականացվեց 1905 թվականի սկզբներին՝ Ռոսսոմի անմիջական ղեկավարությամբ: Այդ աշխատանքների ծավալն ու համակարգված բնույթը գալիս է ապացուցելու, որ հաշված ամիսների ընթացքում Անդրկովկասում ՀՅԴ-ին հաջողվել էր սրեղծել ինքնապաշտպանության կուռ համակարգ: Այն հայր է, որ Թուրքիայի ջարդարարական ծրագրերի (տե՛ս Նամակ թիվ 11) գործիքը դարձած կովկասյան թաթարների դեմ մղված 1905-1906թթ. ինքնապաշտպանական մարտերը Հայաստանի Հանրապետության շեղված գործընթացի նախերգանքն էին, իսկ նրանց կազմակերպիչը՝ նոր ժամանակների Հայոց պետականության հիմնադիրներից մեկը:

թիվ 2(27) հուլիս-սեպտեմբեր 2009

ՎԷՄ համահայկական հանդես

Ներկայացվող փաստաթղթերը, որոնք պայագրվում են առաջին անգամ, «Վէմ» հանդեսի հարգանքի փուրքն են 90 փարի առաջ՝ 1919 թ. հունվարի 18-ին Թիֆլիսում, 2-ая Тумановская փողոցի N38 շենքի (այժմ՝ Չ. Քվիվիձե 52) երկրորդ հարկի այս համեմատ բնակարանում կյանքին հրաժեշտ սլած մեծ հայրենասերի՝ Ստեփան Գրիգորի Չոբանի՝ Ռոստոմի պայծառ հիշատակին:

Խմբ.



ԱՅՏԱՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ

«Վեմ»ի համարներուն մէջ կու տանք պատմական առաջնակարգ կարեւորութիւններ կայացնող փաստաթուղթեր, որոնք Դ. Յ. Դաշնակցութեան կեդրոնական արխիւներուն մէջ կը պահպանուին առանձին երկու տետրերու կամ տոմարներու մէջ վերոյիշեալ համարակալումներով (89ա-2 եւ 48-3): 89ա-2 թղթածրարի կողքին արձանագրուած է.- 1905, իսկ թիւ 48-3 տետրակի կողքին Թուրքիա, 1-7 [Յունուար-Յուլիս], 1905: Գրութիւններուն առաջին 23 հատը վերցուած են այս երկու տոմարներէն եւ կը բովանդակեն 1905 թուականին Արեւմտեան Բիւրոյի կողմէ առաքուած նամակներուն «սեւագրութիւնները»:

Փաստաթուղթերու ծագման վայրը ժընեւ է: Սկիզբը նշուած քաղաքը գրութեան ուղղուած վայրն է. օրինակ՝ Մ. Բ. կը նշանակէ գաղտնի թանաքով արտագրելի նամակը պիտի առաքուի Թիֆլիս, ընդհանրապէս Արեւելեան Բիւրոյին, Նաւահանգիստ Բաթում, Կեդր. Կոմիտէին եւայլն: Վերոյիշեալ գրութիւններուն առանձնայատկութիւնը այն է, որ անոնք պէտք է արտագրուին գաղտնի թանաքով եւ այդպէս ուղարկուին իրենց հասցեատէրերուն, այսինքն՝ Ցարական Ռուսիոյ մէջ գործող կոնկալցական մարմիններուն: Անոնցմէ մէկը ծածկագրութիւնն էր թուանշաններով, որուն գործածութիւնը պիտի ստանար շուտով լայն ծաւալ: Կ'առնուէր հայրենասիրական ծանօթ երգ մը («Մեր հայրենիք, թշուառ, անտէր», «Մայր Արաքսի ափերով», «Ձայն տուր, ով ծովակ», «Որ մեռնում եմ քաջի նման, կռիւ տալով մինչեւ վերջ» եւ այլն), զի թուագրէին շարքով երգին առաջին տողերուն խօսքերը, ապա այբուբենի դուրս մնացած տառերուն՝ մինչեւ եւ, օ, ֆ կը տրուէր յաջորդական կարգով թուային իրենց արժէքը: Այսպէս, երկուստեք պայմանաւորուած երգին ծածկագրով պէտք է «բացուէր», այսինքն ընթերցուէր նամակը: Ծածկագրութեան ենթակայ էին առ հասարակ անձնանունները, տեղանունները, թիւ, թուական կամ որեւէ պատահար ու նտածում, որ ծածուկ պէտք է պահուէր: Կը պատահէր սակայն, որ ամբողջ գրութիւնը շարադրուած ըլլար թուանշաններով:

Ծածուկ հաղորդագրութեան ուրիշ միջոց մըն էր գաղտնագրութիւնը, այլ խօսքով՝ անգոյն թանաքի գործածութիւնը: Արտաքնապէս անմեղ՝ ընտանեկան, բարեկամական կամ առեւտրական բնոյթի նամակներու տողամէջերուն եւ բաց ձգուած տարածութիւններուն վրայ անգոյն մեկանով կը գրուէր բուն նամակը, զոր ստացողը պէտք է «բանար» քիմիական յատուկ լուծոյթով մը:

Դասկնալի դարձնելու համար այս սեւագրութեանց ներկայացուցած արժէքը, կը բաւէ յիշեց-

նել, որ գաղտնի թանաքով գրուած նամակներուն համար Բիւրոներու կողմէ առկայ էր միշտ խիստ թելադրանք՝ «Կարդալէ ետք փճացնել»: Յրահանգը գործադրուած է առհասարակ տառացիօրէն, եւ պատմական առաջնակարգ կարեւորութեամբ հարիւրաւոր փաստաթուղթեր ընդմիշտ կորսուած պիտի ըլլային, եթէ ժընեւի կեդրոնի տոմարներուն մէջ այդքան բժախնդրութեամբ պահուած չըլլային անոնց սեւագրութիւնները:

Սակաւաթիւ սեւագրութիւններու տրերը կը մնան անծանօթ: Կը թուի, որ պարագայաբար ժընեւի խմբագրատուն գտնուող երիտասարդներ են, որոնց վատահուած է օգնական արտագրողի աշխատանքը: Այսուհանդերձ ակներեւ է Ռոստոմի տիրական ներկայութիւնը թղթածրարի ամբողջութեան վրայ, որուն իւրաքանչիւր էջին կը գտնենք թանձր, սեւ մատիտով իր կողմէ կատարուած սրբագրութիւններ եւ յաւելումներ: Ռոստոմի գրչով նշուած են նամակի գրութեան կամ առաքման թուականը, հասցէն, որու ձեռքը յանձնուիլը, «ստացուած», այսինքն տեղ հասած ըլլալը եւայլն:

Կովկասեան իրադարձութիւնները, յատկապէս հայ-թաթարական ընդհարումներու առաջին փուլը, սկիզբ առաւ 1905 թ. Փետրուարին Պաքուի մէջ հայկական թաղամասին վրայ թուրք զինեալ խուժանին յարձակումով եւ ապա տարածուեցաւ Անդրկովկասի գրեթէ բոլոր շրջաններուն: Կուսակցութեան առաջին գործը պիտի ըլլար կազմակերպել կովկասահայութեան ինքնապաշտպանութիւնը, անհրաժեշտ մարդոյժն ու զէնք-զինամթերքը հասցնել եւ, վերջապէս, արժանի հակահարուածը տալ եւ թուրք մախայրածակներուն, եւ զանոնք իրաւորող ցարական իշխանաւորներուն:

Գրութիւններուն մէջ լայն տեղ յատկացուած է այս առթիւ եւ ընդհանրապէս՝ նոր տեսակի զէնքերու ձեռքբերման, զանոնք ապահով տեղ հասցնելու միջոցներուն եւ ճանապարհներուն, ինչպէս նաեւ ռումբերու, ուժանակի, հրթիռներու եւ մինչեւ իսկ թնդանօթի փորձարկումներուն, որոնց նկատմամբ ակնյայտօրէն յատուկ հետաքրքրութիւն եւ իմացութիւն կը ցուցաբերէ Ռոստոմ:

Ծանկտներու համար ճշգրտած ենք փաստաթուղթերու ամսաթիւը, նաեւ տարեթիւը անկիւնաւոր փակագծերու մէջ: Նշուած են թղթածրարի թիւը (օրինակ՝ 48) եւ նոյն թղթածրարի մէջ վաւերաթուղթին թուակարգը (օրինակ՝ 3): Այսպէս 48-3, կը նշանակէ թիւ 48 թղթածրարի թիւ 3 վաւերաթուղթը: Փաստ. 16-22, 16-27 եւ 32-37 վերցուած են Ռոստոմի անտիպներէն:

Տեղանունները, յաճախ յիշատակուած իրենց ծածկանուններով, ընդհանրապէս պէտք է հասկնալ իբրեւ տեղական կազմակերպութիւնը կամ անոր գործադիր մարմինը (Կեդր. Կոմիտէ).-

Այգեստան - Գանձակ:
Ապառաժ - Ղարաբաղ եւ Ջանգեզուր:
Աւարայր - Խոյ:
Բարձրաբերդ - Կարին-Էրզրում:
Բարձրաւանդակ - Սասուն:
Դաշտ - Զալէպ:
Դուրան - Տարօն, Սշոյ դաշտ:
Դուրան - Բարձրաւանդակ - Տարօն եւ Սասուն միասին:
Եկեղեցի - Մոսկուա:
Թմբուկ - Ախալքալաք:
Ժլատ - Զիւս. Կովկաս առանց Նոր Նախիջեւանի (Նալբանդ):
Լեռնավայր - Կիլիկիա, Սուրիա եւ Լիբանան:
Ծաղիկ (Կռուածաղիկի կրճատումը) - Կ. Պոլիս:
Ծովափ - Տրապիզոն:
Ծոց - Պէյրութ:
Կայծ - Օտեսա:
Զիւսիսակերտ - Պետերսբուրգ:
Մ. Ք. = Մեծ քաղաք - Թիֆլիս. նաեւ Արեւելեան Բիւրօ:
Մինարէք - Սալմաստ:
Մրգաստան - Երեւան:
Նաւահանգիստ - Պաթում:
Շամ - Վան, Վասպուրական:
Ոսկանապատ - Բագու,
Ոսկեհանք - Իզմիր-Ջմիւռնիա:

Ջրաբերդ - Կարս:
Ջրվեժ - Մերսին:
Վիշապ - Կ. Պոլիս:
Վրեժ, Վրեժստան - Ատրպատական եւ Պարսկաստան:
Քար - Ալեքսանդրապոլ-Գիւմրի:
Սարուստան - Զիմնականին մէջ Կովկասն է, բայց եւ կը գործածուի Ռուսաստան իմաստով. ընդամենը 10 Կեդր. Կոմիտեութեանց բաժնուած.
I - Մեծ քաղաք - Թիֆլիս,
II - Ջրաբերդ - Կարս,
III - Մրգաստան - Երեւան,
IV - Ոսկանապատ - Բագու,
V - Քար - Ալեքսանդրապոլ-Գիւմրի,
VI - Նաւահանգիստ - Պաթում,
VII - Նալբանդ - Ռոստով - Նոր Նախիջեւան,
VIII - Ապառաժ - Շուշի, Ղարաբաղ-Ջանգեզուր,
IX - Այգեստան - Գանձակ,
X - Ժլատ - Արմաւիր (Նոր) - Վլատիկակաս:
 Վերոյիշեալներէն դուրս, կոմիտէներ էին Զիւսիսակերտը (Պետերսբուրգ) եւ Եկեղեցին (Մոսկուա):
 Ահա այն բոլորը, զոր անհրաժեշտ տեսանք արձանագրել, դիւրացնելու համար ընթերցողին կան ուսումնասիրողին աշխատանքը:

Երուանդ Գ. Փամպուրեան
 (Պէյրութ)

Summary

HOW WAS PREVENTED THE ANNIHILATION OF EASTERN ARMENIANS IN 1905-1906 The encoded letters-instructions of Rostom

Ervand G. Pambukian (Beirut)

Նամակ թիւ 1

Փաստ. համարակալում
89ա-2 (թթ. 222-223)

Մ. ք. (1)

16 Մայիսի [1905]

Այստեղից անցնող մէկի (հանգադեանի) (2) ձեռքով նամակ ենք գրել մի շաբաթ առաջ:

Քանի անգամ ձեզ գրել ենք փողի մասին: Ինչ կար, վերջանում է, իսկ առաջներս ահագին պահանջներ կան: Ձեռքի համար միայն հարկաւոր է առաջմ 110.000 fr.: Անմիջապէս փոխադրեցէք 100.000 ռ. թէ չէ խայտառակ դրութիւն է ստեղծուում: Գնադրեցիք Աւետիքին (3), յետ եկաւ հեռագիրը, դուրս եկած է այրտեղից. կարծես դժուար էր յանձնարարել, որ եկած հեռագիրը տուն տանեն կամ ուրիշին յանձնեն: Ստիպուած եղանք Թովչեանի (4) հասցեով կրկնել: Կրկնում ենք, անմիջապէս կարգադրէք:

Ի՞նչ եղաւ Միերը (5):

1. Ռոստոմի ձեռագիր:
2. Փակագծի մէջ անընթեռնելի անուն:
3. Սահակեանին (Գայր Աբրահամ):
4. Եղիշէ Թովչեան:
5. Գամօ Օհանջանեան:

Նամակ թիւ 2

Փաստ. 89ա-2 (թթ. 224-226)

Մ. ք. (1)

4-ին Յունիսի [1905]

Մեր վերջին նամակը եղել է Մայիս 16-ին: Պետրոսի միջոցով ուղարկած 40.000-ի չափ գումարը ստացանք:

Նախիջեանի դէպքերի առթիւ այստեղ բաւական խորհրդակցութիւններ ունեցանք: Վերջ ի վերջոյ որոշուեցաւ հետեւեալը.

1) հրատա[րա]կել մի կոչ ֆրանսիական պարլամենտի եւ սենատի անդամներին, ինչպէս նաեւ միւս երկրների պարլամենտների 2) դիմում հասարակական կարծիքին 3) դիմել Սակարովիչին (2) կազմակերպութեան, որպէսզի աշխատի վրացի հասարակութեան մէջ ցոյցեր կազմել կառավարութեան ընթացքի դէմ 4) գրել Ամերիկայի ընկերներին, որ դիմում անեն Ռուզվելտին (3) եւ ամերիկական հասարակական կարծիքին 5) ժընեւում կազմակերպել միտինգ:

Բացի այդ, հարկ ենք համարում ձեզ առաջարկել 1) Մի նախագուշացում Դաշկովին (4) 2) Ձեռք առնել նորից Ռէտվեզանի խնդիրը, ցոյց

տալու համար ներկաներին, որ հեռանալով էլ չեն ազատուելու պատժից 3) Դադարեցնել մանր տեռորները, որ աւելորդ առիթներ կարող են տալ արտակարգ խստութիւնների 4) Կազմակերպել անպատճառ ափ իջեցնելու խնդիրը: Բարսեղեանը յանձնարարել էր Ռ-ին գրել իր նամակում, որ միջոցը պատրաստ է, եթէ պատրաստ է, շտապեցէք յայտնել մեզ a) ինչ քանակութեամբ կարելի է ուղարկել ամէն անգամ b) արկղների մեծութիւնը, ծանրութիւնը, ձեւը c) Որտեղից ճանապարհ ձգել, d) ինչպէս նշանակել հասցէն:

Վարդի խնդիրը ի՞նչ եղաւ: Անպատճառ կարգադրեցէք, որ փողը կամ մեզ հասցնի, կամ Պիննեանին, Ֆիլիպ: Ապսպրած իրերը մենք կը գնենք, առանց սպասելու ձեր ուղարկած դրամի ստանալուն:

Մի նամակ ստացանք, որի բովանդակութիւնը մեզ չէր վերաբերում: Գողորդեցիք Եկեղեցի: Երեւի մերն էլ ուղարկուած է այնտեղ:

Մռաւի (5) նամակները չի կարելի այդպէս բաց գրել եւ փոստին յանձնել:

Բարեկամները զանգատում են, որ իրենց խոստացած թէյը (6) դեռ չի ստացուած, չգիտեն Ոսկանապատի մեր ընկերների, թէ իրենց ընկերների պատճառով: Բայց չլինի թէ մեր կողմից արգելք լինի, խոստումը արուած է Մռաւի եւ Միերի այստեղ եղած ժամանակ:

Ծրագրի ընդի. մասը շարուած է, ուզում էինք նախ Դոշակում դնել, բայց յետոյ անյարմար գտանք: Կուղարկենք ձեզ երեսը: Պատրաստուում է բուն ծրագրային մասը: Ուշանալուց մի նեղանաք, չէ որ պատասխանատու գործ է: Յաւելուածն (7) աւելորդ է ուղարկել, քանի որ արդէն վերջին Նոի մէջ լոյս է տեսել:

Վորոնցով-Դաշկովի խաղաղացումը լինելու է երեւի հետեւեալ ձեւով: Նա կ'աշխատի մահմետականների միջոցով ահաբեկել հայերին եւ բազմաթիւ բանտարկութիւններ անել տալ, ինչպէս արել են Գուրիայում:

Գրեցէք, թէ ինչպէս էր շինուած եւ լցուած Նակաշիձի ռումբը:

Շատ լաւ կը լինէր, եթէ անմեղ զոհերի ընտանիքներին տրուէր որոշ վարձատրութիւն: Յայտարարուէր նոյնպէս, որ դատապարտուած անձանց հետ միասին լինելուց խոյս պէտք է տալ:

Շատ հաւանական է, որ մահմետականների յարձակումները տարածուեն միւս գաւառների վրայ եւս: Որքան էլ գիտուած լինեն մեր գիւղերը, բայց եթէ նրանք առանձին առանձին ուզենան

պաշտպանուել, միշտ կը տուժեն. յարծակուողները միշտ կարող են իրենց թիւը եւ ոյժը աւելացնելով, խորտակել ամեն մի ընդդիմադրութիւն. պէտք է առաջուանից մարդիկ նշանակել ամեն մի գիւղում, որ թշնամու երեւալուն պէս, նրանք բոլորը հարեւան գիւղերից համախմբուեն եւ թշնամու առաջը կտրեն եւ ոչ թէ ամեն մի գիւղ առանձին ենթարկուի յարծակման:

1. Ռոստոմի ձեռագիր: Արեւելեան Բիւրոյին ուղղուած նամակ:
2. Վրացական սոցիալ-ֆեդերալիստ կուսակցութիւն:
3. Ամերիկայի հանրապետութեան նախագահ:
4. Վորոնցով-Ղաշկով, Անդրկովկասի փոխարքայ:
5. Ժամհարեան Մարգար: Եկեղեցին՝ Մոսկուան է:
6. Թէլը այլաբանական իմաստով գործածուած է հոս: Շատ հաւանաբար հարցը ռուս յեղափոխականներուն խոստացուած ուժանակներուն մասին է:
7. Խօսքը «Դրօշակ»ի յաւելումովն մասին է «Ծրագիրը» Ղաշկովի կողմէն հարիւրդին կողմէ ընդունուած Կովկասեան նախագիծն է:

Նամակ թիւ 3

Փաստ. 89ա-2 (թ. 227)

Նաւահանգիստ (1) 4-ին Յունիսի [1905]

Նաւի համար ձեր ձեռքով արած ծախսերի հաշիւը ուղարկէք, որպէսզի Մարտլիի հաշուին աւելացնելով, մտցնենք ընդհանուր հաշուի մէջ:

Փոխարկութեան խնդրի համար մի քանի անգամ գրել ենք Մ. Բ., կրկնում ենք համառօտակի ձեզ:

1) Աշխատէք վրացիների հետ միասին մաքսատան վրացի պաշտօնեաների աջակցութեամբ մաքսատանի միջից ապահով կերպով ապրանք անցկացնելու: Սակարտվելոյի խմբագիրները խոստացել են իրենց ընկերների աջակցութիւնը:

2) Եթէ ուրիշ կերպով հնարաւորութիւն ունէք ապրանքը նաւից հանելու, խնդրենք շուտով յայտնել մեզ ա) ինչ քանակութեամբ մի անգամից կարող էք դուրս հանել բ) ինչ երկարութեամբ, լայնութեամբ, ծանրութեամբ պիտի լինի իւրաքանչիւր սնտուկ գ) որ քաղաքից եւ ինչ ապրանքի անուն տակ յարմար է յամծնել նաւին:

Եթէ հարկաւոր է յատուկ մի մարդ այդ գործի համար եւ եթէ դուք չունէք, գրեցէք:

Այս անգամ թերթի ծանապարհով կը ստանաք գուցէ 3 մաուզլերեան ատրճանակ:

1. Ռոստոմի ձեռագիր: Գրութիւնը ուղղուած է Ղաթուն (Նաւահանգիստ):
2. Վրացական նոյնանուն կուսակցութեան պաշտօնաթերթը:

Նամակ թիւ 4

Փաստ. 48-3 (թթ. 59-62)

Սմբատին (1)

6-ին Յունիսի [1905]

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ Բագուի դէպքի առթիւ բռնած կառավարութեան դիրքը եւ դրանից յետոյ առաջացած Նախիջեւանի շրջանի աղէտները ոչ մի կասկած չեն թողնում, որ կառավարութիւնը վերջնականապէս որոշել է կոտորածներով սարսափ տարածել հայ ժողովրդի վրայ, տեսնելով նոյնանման պատրաստութիւնների նշաններ եւ այլ վայրերում, նոյնիսկ մասնակի յաջողութիւններ վրացիներին եւս հայերի դէմ գրգռելու գործի մէջ, զգալով, թէ որքան ներկայումս կարիք կայ Կովկասում փորձուած եւ ղեկավար ուժերի, Արեւմտեան Բիւրոն մասնակցութեամբ Յունանի, Մարի, Գրիգոր Վարդանեանի եւ Լեռնավայրի մարմնի անդամ Վարդանի (2) կատարեց մի շարք ժողովներ, որի հետեւանքը եղաւ ի միջի այլոց եւ հետեւեալ որոշումը.

Առաջարկել Սիմոնի եւ Վարդանի ժամանակաւորապէս թողնել Լեռնավայրը: Ինչպէս փորձերը ցոյց տուին, ներկայ պարագաներում ոչ Վարդանը եւ ոչ Սիմոնը հնարաւորութիւն չունեն օգտակար լինելու այդ շրջանում այն չափով, ինչ չափով կարող էին լինել, եթէ նախապատրաստական գործը քիչ առաջ գնացած լիներ: Նրանց ժամանակաւոր բացակայութիւնը Լեռնավայրի շրջանից, ի հարկէ, որոշ բացասական հետեւանքներ կ'ունենայ, բայց այն ահագին օգուտը, որ նրանք կարող են տալ ուրիշ շրջաններում, հարկաւորապէս կը փոխարինէ առաջ զալիք վնասը: Այս պատճառով առաջարկուած է Վարդանին, որ անմիջապէս ճանապարհ ընկնի Կովկաս: Սա համաձայն լինելով անձամբ, ուզում է միայն ունենալ Սմբատի համաձայնութիւնը եւս, որ խնդրում է յայտնել հեռագրով, հետեւեալ հասցէին Gregoire Foun, Bertholet, 20, Paris: Իբրեւ փորձառու զինուորական ոյժ, նրա ներկայութիւնը Կովկասում ներկայ տագնապալից պարագաներում, աւելի քան անհրաժեշտ է: Սիմոնի գալով, նրա վերաբերմամբ առաջարկուած է երկու բան.

1) Գալ ժամանակաւորապէս ժընեւ, փոխարինելու համար Ռոստոմին, որը նոյնպէս պատրաստուած է Կովկաս անցնելու,

2) Կամ գնալ Կովկաս, ուր նրա ներկայութիւնը ստիպողական է ծագած բարդ յարաբերութիւնների պատճառաւ. մասնաւորապէս աչքի առաջ ունենք բանակցութիւնները եւ համաձայնութիւնները վրացիների հետ, որոնց մէջ նա

բազմաթիւ կապեր ունի: Առաջին առաջարկը աւելի նպատակայարմար է, որովհետեւ յարաբերութիւնների գործը Կովկասում մասամբ կարող է յաջողեցնել եւ Ռոստոմը, իսկ ժընեւում մնալով՝ Սիւնոնը կարող է հետեւել եւ Լեռնավայրի գործերին:

Երկու շաբաթից յետոյ ճանապարհ է ընկնելու նաեւ Յոնանը: Գրիգոր Վարդանեանը, որ ընտրուած է Վասպուրականի մարմնի անդամ, մի քանի ամիս կը մնայ Կովկասում եւ կը զբաղուի տեղական գործերով: Գնում են Խզմալեանը եւ ուրիշները:

Այս բոլորը անում ենք, որովհետեւ, կրկնում ենք, Կովկասի դրութիւնը շատ լուրջ է եւ նա կարող է դառնալ նոյն սպանդանոցը, ինչ որ եղաւ Տաճկահայաստանը, եւ այդ հարուածը ոչ միայն կը կտորի կովկասահայերին, այլ եւ երկար ժամանակով հրապարակից կը հանի տաճկահայ դատը:

Խնդրում է Սիւնոնից, որ իր մասին եւս հեռագրով պատասխանի:

(Վարդանը խնդրում է աւելացնել, որ եթէ Սիւնոնը չուզենայ դուրս գալ, ինքն էլ կը հրաժարի Կովկաս գնալուց):

Այսպէս ուրեմն, ամէն բան կախուած է քո դուրս գալուց: Եթէ հեռագրես Օսի, դա նշանակում է, թէ դուրս ես գալիս եւ մնալու ես ժընեւ. այս դէպքում Վարդանը եւ Ռոստոմը ճանապարհ կ'ընկնեն. Bon, նշանակում է ուզում ես Կովկաս անցնել: Non, նշանակում է չես ուզում դուրս գալ (այս դէպքում Վարդանն էլ կը մնայ):

1. Սիւնոն Զաւարեանին, Ռոստոմի ձեռագրով:
2. Յոնանը՝ Դաւթեանն է, Մարը՝ Միք. Տէր Մարտիրոսեան, Գրիգոր Վարդանեանը՝ նոյն ինքն Վանայ Սարգիսը (Բարսեղեան-Օտապաշեան), որ այդ անունը կրող անցագիր կը գործածէր, իսկ Վարդանը՝ Խանասորի Վարդանն է (Մեհրաբեան Սարգիս): Յիշուածներն բոլորն ալ շուտով պիտի անցնէին Կովկաս, հայքրքական ընդհարումներու ընթացքին հայութեան ինքնապաշտպանութեան գործը վարելու համար:

Նամակ թիւ 5

Փաստ. 48-3 (թթ. 63-66)
Վիշապ (1) 14-ին Յունիսի [1905]

Ստացանք Աշոտի նամակը. Վռամի (2) լուսանկարը ժամանակին ստացել ենք: Խնդրել էինք սպասել մի նորը գտնելու համար, որովհետեւ ձեր ուղարկածը բաւական անաջող է:

Բացի այդ նպատակայարմար ենք գտնում հրատարակութեան յանձնել դէպքից յետոյ:

Գրիմից նամակ ստացանք: Գրում է, որ չտապենք հրատարակել Վռամի կենսագրութիւնը: Նա ձեզ այնպէս է հասկացել, իբր թէ մենք շատ ենք շտապում: Հանգստացրէք նրան պարզելով, որ մենք ինքներս անժամանակ ենք գտնում այդ բանը:

Քրիստափորի լուսանկարը նոյնպէս յետոյ կ'ուղարկենք:

Սաֆոյի նամակը՝ Բուքրէշից գրած, ստացանք, ինչպէս նաեւ արխիւում պահուելիք ծրարը:

Ոսկեհանքից լուրեր են գալիս այնտեղ կատարուող վրդովեցուցիչ ծախսերի համար: Պահանջեցէք հաշիւ. ի սէր Աստոյ, դրանք մեզ բոլորովին խայտառակելու են: Ինչպէս իմանում ենք, Անդրանիկը (3), Գեորգը եւ մի ուրիշը կազմակերպութեան դրամի վրայ նայում են, ինչպէս իրենց սեփական: Բացի 5 հոգուց, որ մարմին են կազմում, կազմակերպութեան հաշուին ապրում են դարձեալ 15 հոգի: Սրանց մէջ կան այնպիսիները, որոնք անձնական պարապմունք ունեն: Պէտք է վերջ տալ սրան: Եւ այդ բանը դուք պէտք է անէք, քանի որ ձեր սկզբնական քայլերով դուք էք նպաստել այդ ընթացքին: Պէտք է դրանց հասկացնել, որ յոյս դնել նոր գումարների վրայ չեն կարող, քանի որ մէկ կողմից Կովկասը մեծ ոյժ է կ'անելու, միւս կողմից չի կարողանալու անցեալի չափով եկամուտ տալ: Դրութիւնը այնտեղ սոսկալի է երեւում: Կառավարութիւնը ափ արծակ հովանաւորում է թուրք սրիկաներին եւ աւազակներին, միւս կողմից նեղում է ամէն կերպ հայերին: Յարձակման պատրաստութիւններ են տեսնում նոյնիսկ Թիֆլիսում: Երեւանում կոզակների սպաները ազատ կերպով թուրքերին զինավարժութիւն են սովորեցնում: Խուզարկում են հայերին, զէնքերը խլում: Այսպիսով ուզում են թուլացնել հայերին, յարձակումները յաջողեցնելու համար: Երեւանում կրկնել են յարձակումը, առաջին օրը սպանել են եւ վիրաւորել մօտ 20 հայ: Երկրորդ եւ երրորդ օրերը մերոնք են յարձակուել եւ մեծ ջարդ տուել թուրքերին: Հարիւրաւոր սպանուածներ ու վիրաւորներ կան թուրքերից: Անմիջապէս զօրքը միջամտում է եւ զինուորական դրութիւն է հաստատում: Նախիջեւանում մերոնք պաշտպանում են տները. այնքան ոյժ չեն ունենում, որ դուրս գան շուկան եւս պաշտպանելու: Ղարսից ճանապարհ է ընկնում 15 հոգինոց մի խումբ, որ ճանապարհին ստուարանալով հասնում է 80 հոգու: Այդ խումբը մի քանի ջարդ է տալիս թալանողներին ու աւազակներին, յետ առնելով աւարը: Ցաւալին այն է, որ վրացիներ

րին էլ են գործում հայերի դեմ, եւ դա մասամբ կարծես թէ յաջողում է: Շատ լարուած դրութիւն է ամենուրեք: Ստիպուած եղանք Վարդանին առաջարկել Կովկաս գնալ: Անդրանիկը (4) նոյնպէս պատրաստուում է, սպասում է համաձայնութիւն Մ. Բ.ից: Գնում են մի քանի ուսանողներ եւս: Ռոստոմը նոյնպէս ճանապարհ է ընկնում: Կովկասը կարող է արիւնլուայ լինել, ինչպէս Տաճկահայաստանը: Սիմոնին հրաւիրել ենք այստեղ Ռոստոմի փոխարէն: Վարդանի եւ Սիմոնի ժամանակաւոր հեռանալը Լեռնավայրի շրջանից առանձնապէս չի վնասել այնտեղի գործերին, քանի որ գործը դեռ բոլորովին նախապատրաստական շրջանի մէջ է: Վարդանը առանց այն էլ մի առժամանակ մտադիր էր դուրսը մնալ, իսկ Սիմոնը ժընեւից մասամբ կարող է զբաղուել եւ Լեռնավայրի գործերով:

1. Ռոստոմի ձեռագրով նամակ ուղղուած Պոլիս՝ Ցուցական մարմնին:
2. Աշոտ, Սեւ Աշոտ, Աշոտ Բագրատունի, իսկական անունով եղիկեան Կարապետ, անդամ էր Ցուցական մարմնին: Վռանը Վռանշապուհ Քենտրիեանն է, զոհուած Քրիստափորի հետ ռուբերու փորձարկման ընթացքին:
3. Չփոթել Սասնոյ հերոսին հետ. այս մէկը անդամ էր Իզմիրի օժանդակ կոմիտէին:
4. Բուն ինքը՝ հայրուկապետը, որուն Կովկաս անցնիլը վտանգաւոր համարուեցաւ: Անդրանիկ մնաց Եւրոպա եւ զբաղեցաւ զինական գնումներով եւ, աւելի ուշ, Պոլկարիոյ 3. 3. Դ. զինուորական վարժարանի կազմակերպութեամբ:

Նամակ թիւ 6

Փաստ. 89ա-2 (թթ. 229-232)

Մ. Բ. (1)

16-ին Յունիսի [1905]

Ստացանք ձեր հեռագիրը՝ Բուլղարիայում ապսպրած ապրանքի մասին: Մենք էլ իսկոյն կարգադրեցինք, որ պատուէրը կատարեն եւ տեղ հասցնեն համաձայն ձեր նամակի ցուցմունքներին: Բայց ի՞նչ արիք այդ ապսպրանքի համար Վարդին (2) փոխադրած 2000 ռ.ի մասին: Գնազրեցի՞ք, որ յանձնի: Եթէ չէք արել, անմիջապէս եւ իսկոյն պահանջէք, որ փողը ուղարկի կամ մեզ կամ Ֆիլիպէ, թէ չէ դուր գլխին էլ քար կ'ընկնի:

Սինչեւ հիմա մի կարգին բան չգրեցիք Նաւահանգստում ստանալիք ապրանքի փոխադրութեան ձեւի մասին: Գրում էք, որ ուղարկենք սովորական նաւերով, բայց ինչպէ՞ս. իրբեւ ապրա՞նք յանձնենք նաւին, ինչպէ՞ս, ինչ նշանով պէտք է Նաւահանգստի ընկերները ճանաչեն սնտուկնե-

րը: Թէ մա՞րդ պէտք է դնենք հետը: Խնդրում ենք կէտ առ կէտ, ամենայն մանրամասնութեամբ գրեք փոխադրութեան ձեւի, հասցէի, սնտուկների մեծութեան, ծանրութեան եւ այլ պայմանների մասին: Անհրաժեշտ է մի քանի ազատ մարդ Նաւահանգստում եւ այլ կէտերում:

Եթէ ապրանք ընդունելու խնդիրը կարգադրեք, ամէն բան կարող ենք հասցնել:

Կրպոն, որ աշխատել է այդ կողմերում, պատրաստ է գալ: Մենք էլ շատ յարմար ենք գտնում նրան, բայց սպասում ենք ձեր հեռագրին: Եթէ առհասարակ մարդու պէտք ունէք, գրեցէք, այստեղ բաւականաչափ փափաքողներ կան:

Ուզում էին գալ Անդրանիկը, Վարդանը, Ռոստոմը: Ձեր հեռագրից յետոյ միայն Վարդանն է ճանապարհ ընկնելու: Եթէ գործերը բարդանան, կը գան եւ միւսները (3):

Բարսեղեանի գրած մի նամակը (8 Մայիս) երէկ միայն ստացանք (1/14 Յուն.): Ինչո՞ւ ուղղակի հասցէներով չէք ուղարկում:

Օտար թերթեր ուղարկում ենք Վրեժի վրայով: Ծրագրի նախագիծը անվերջ փոփոխուում էր. տրամադրութիւն էլ չկար վերջին դէպքերի պատճառով: Վաղը վերջապէս յանձնում ենք տպարանին:

Զի՞ կարելի թի՞ֆլիզի եւ Բաթումի ինքնապաշտպանութեան գործին հրաւիրել նաեւ վրացիներին ու ռուսներին: Դամերաշխ ակտիւ քայլը մեծ նշանակութիւն կ'ունենար: Բացի այդ, պէտք է սպառնալ եւ թուրքերի յայտնի անձանց, որ եթէ նրանք չդիմադրեն իրենց բաշխագուկ տարրերին, պիտի պատասխանատու նկատուեն:

Գրում էք, որ հրոսակային խմբեր էք հանում, ակն ընդ ական պատասխանելու համար: Լաւ կը լինէր, եթէ պատժի ենթարկուէին միայն թաւանին, կոտորածին մասնակցած զիւղերը եւ անհատները:

Բարսեղեանի տուած նոր հասցէները Դրօշակ ուղարկելու համար չկարողացանք կարգալ: Նամակները այսուհետեւ յանձնէք գրելու Սիմոնին, որ արդէն ձեզ մօտ եկած կը լինի (4): Բարսեղեանը զանգատուում է մի ինչ որ բանի համար, որ վեցերորդ անգամն է կրկնում: Բայց թէ ինչ բան է, չկարողացանք իմանալ, տեղը բոլորովին մաքուր է: Զոր գրչով, կամ պարզ ջրով է գրել, ինչպէս եւ նախընթաց 5 անգամները:

Ջրաբերդի, Մրգաստանի եւ Քարի կոմիտէները (5) մի ընդհանուր բողոք են գրել մեզ նուիրատուութեանց ցանկի հրատարակութիւնը ուշացնելու համար: Յայտնեցէք նրանց, որ այդ ցանկերը չենք ստացել, ինչ ստանում ենք շուտով յանձնում ենք տպագրութեան:

Նամակ թիւ 8

Փաստ. 89ա-2 (թթ. 233-236)

Մ. ք. (1)

Յունիսի 23-ին [1905]

Նակաչիծէի հետ սպանուած կառապանի եւ պարսիկ մրգավաճառի ընտանիքներին լաւ կը լինէր կոմիտէի կողմից մի դրամական նպաստ տրուէր եւ ցաւակցութիւն յայտնուէր:

Պէտք է այդ առթիւ մի շրջաբերական հանել, որ կոմիտէի կողմից դատապարտուած մարդկանց հետ զգուշանան յարաբերել, նրանց հետ միասին չլինել որպէսզի անմեղ տեղը չզոհուեն:

1. Ռոստոմի ձեռագիր: Նամակին մէջ բազմիցս յիշատակուած Նաւահանգիստը Պաթումն է անշուշտ:
2. Վարդ – Պատրիկեան:
3. Հայ-թրքական ընդհարումներու տարածման հետեւանքով, շուտով Անդրկովկաս պիտի փութային բացի Վարդանէն (Խանասորի), Ռոստոմ, Ջաւարեան եւ շատ ուրիշներ:
4. Եթէ Սիմոնը Ջաւարեանն է, ապա Ռոստոմ կը սխալի, որովհետեւ վերջինը 1906 թ. Յունուարի վերջերուն միայն ծանօթ պիտի ելլէր դէպի Կովկաս, ուր հասաւ Փետրուարի առաջին օրերուն:
5. Յաջորդաբար՝ Կարսի, Երեւանի եւ Ալեքսանդրապոլի:

Նամակ թիւ 7

Փաստ. 89ա-2 (թ. 232)

Նաւահանգիստ (1)

20 Յունիս [1905]

Վաղը առաւօտ Մարտիլից դուրս պէտք է գայ Կրպոն. թող մէկն ու մէկը անպատճառ մաւր գնայ նրան տեսնելու, նախ քան նրա մաւից իջնելը: Հետը բան է բերուն:

Ամսիս 4-ին մեր գրած նամակին պատասխանը յոյս ունենք այս երկու օրը ունենալ: Մի անգամ եւս խնդրում ենք փոխադրութեան խնդրին տալ առաջնակարգ մշտնակութիւն: Մի խնայէք ոչ մարդկային աշխատանք եւ ոչ փող:

Ամէն կերպ աշխատեք համերաշխութիւն պահպանել միւս յեղափոխական կուսակցութիւնների հետ, մասնաւորապէս վրացիներին: Խառը մարմին կազմէք քաղաքը պաշտպանելու համար, եթէ խռովութիւն սարքեն կամն (2) կամ թուրքերը:

Լեւոնին գրէք, որ պայթուցիկ փոշի ճանապարհ ձգի. իր գտնուած տեղում ունենք մեծ քանակութեամբ:

1. Ռոստոմի ձեռագիր:
2. Ռուսերէն անընթեռնելի բառ:

Համոյի հասցեով (շնկոլատով)

Միերի նամակները ստանում ենք: Ջարմաւալի մարդիկ էք: Կազմակերպական ներքին գաղտնիքները Միերը գրում է պարզ թանաքով, իսկ Նիթրան (2) տպագրութեան համար սահմանուած տեղեկութիւնները – գաղտնի թանաքով: Խնդրում ենք, ուշադրութիւն դարձրէք եւ գաղտնիքների մասը գրէք գաղտնի թանաքով:

Փոխադրութեան գործը եթէ կանոնաւորուել է կամ կանոնաւորուելու յոյս կայ, հեռագրէք, որպէսզի շուտով մի մարդ ունենանք արտասահմանում յատկապէս գնման եւ փոխադրութեան գործի համար: Քանի որ Calecjian անունը արդէն կապուած է Դրօշակի հետ շնորհիւ վերջին հեռագիրների, գործի վերաբերեալ հեռագիրները, մանաւանդ եթէ գաղտնի բանալիով է, ուղարկէք ուրիշ անուան, օր[ինակ] Edouard, Roseaie, 29:

Վարդանը ճանապարհ կ'ընկնի երկու երեք օրից յետոյ: Կրպոն արդէն դուրս է եկել դէպի Նաւահանգ[իստ]: Ուրիշ մարդ ուզո՞ւմ էք: Կան ուսանողներ, որ փափաքում են գալ, եթէ պէտք ունեք, հեռագրէք. Bon.

Թերակղզում ապրանքը ապսպրուած է արդէն, կարգադրութիւն արեք Գալստի վերաբերմամբ:

Այդ ապրանքի մեծ մասը, նոյն իսկ գուցէ եւ ամբողջը կարելի է ճանապարհ ձգել Մարտիլից եւ անհամեմատ աւելի արժան: Ի նկատի ունեցէք սա ապագայի համար:

Ինչո՞վ բացատրել զօրքի աջակցութիւնը Խանուխլարում:

Միտինգների շարք կարելի էր բանալ Եւրոպայում, եթէ ֆրանս-գերմանական գծութիւնը չծագէր. ժօրեսը (3) խօսք էր տուել Յունիսի 8-ի համար, բայց յետոյ հրաժարուեց: Շուտով Խաւատուրը եւ Աւետիսը (4) կը գնան Պարիզ արտասահմ[անեան] պրոպագանդի խնդիրը որոշելու: Առայժմ գոհանում ենք հեռագիրներ տալով Եւրոպական կարեւոր թերթերին:

Սակարտվելոյի խմբագրութիւնից ստացուած մի նամակից երեւում է, որ վրացիների մէջ էլ գրգռում կայ հայերի դէմ: Դա վերագրում են Դաշկովի բերած պրովակատորներին: Այսպէս կամ այնպէս մի օր գուցէ ծագի հայ-վրացական ընդհարումներ: Չգիտենք, թէ այս լուրը որքան ճիշդ է, բայց յամենայնդէպս անհրաժեշտ է մի քանի ձեռ-

նարկներով ամեն պատահարի առաջն առնել: Կարծում ենք, որ լաւ կը լինէր մի խառը մարմին կազմել քաղաքի պաշտպանութեան համար:

Սակարտվելոյի ասելով վրացիների դժգոհութեան պատճառը այն է, որ լուր է տարածուած, իբր թէ Կովկասում միայն հայերն են, որ դաշնակցական կազմակերպութեան դէմ են!... Լալիմ[?] եւ ընկ.(5) չէ՞ք կարող նոյնիսկ լեզալ գրականութեան միջոցով պարզել մեր ձգտումները, կամ շրջաբերականով, եթէ լեզալ թերթերում թոյլ չտան: Չետաքրքիր է, թէ ինչ են ամուն դրա հանդէպ մեր դաշնակիցները, ինչ միջոցներ են ձեռք առել: Այս իմաստով մի նամակ էլ մենք ենք գրելու Սակարտվելոյին:

Լսում ենք, որ Թիֆլիզում մեծ վախ կայ: Եթէ այդպիսի մի պատրաստութիւն տեսնուելու լինի, առանց դրսից եկողների չենք կարող յաջողել: Անհրաժեշտ կը լինի ուրեմն Գալաբարի եւ Շէթան-Բազարի քարվանսարաններում լրտեսներ ունենալ, թուրքերի շարժումներին հետեւելու համար: Դա մի դժուար գործ չէ: Կարելի է յատուկ խումբեր պահել Բորչալուից եկող թուրքերի ճանապարհը կտրելու համար: Գարկաւոր կը լինի զինել քարվանսարաններում բանող հայ մշակներին, մասնաւորաբար այնտեղ, ուր մեծամասնութիւնը թուրք վաճառականներ են: Կարելի է առաջուանից նշանակել կէտեր թուրքերի մասում յարձակում գործելու համար եւ տներ օդը ցնդացնելու: Այդ նպատակի համար շատ յարմար է հետեւեալ բաղադրութիւնը, որ շատ հեշտ է պատրաստել եւ մեծ քանակութեամբ: Պէտք է ամնել dinitro benzine 75% (գործ է ածուում ճոթի գործարաններում ներկելու համար) եւ 25 % (6) (գործ է ածուում իբր հող պարարտացնող): Երկուսն էլ առանձին առանձին պէտք է լաւ փոշի դարձնել, մաղել ամենամուրը մաղով, յետոյ լաւ չորցնելուց յետոյ խառնել: Պատրաստութեան ժամանակ ոչ մի վտանգ չկայ: Պատրաստուած խառնուրդը նոյնպէս անվտանգ է, չի պայթում ոչ կրակից, ոչ հարուածից: Պայթեցնելու համար պէտք է առնել (6) կամ մեր ունեցած կապիւլներից (ըստ կարելոյն մեծերը), ամեն մէկ 100 gr.-ին 2 gr պրիմուչայա (6):

Երկու աղերն էլ պէտք է լինեն մաքուր:

1. Ռոստոմի ձեռագիր:
2. Միերը Գանօ Օհանջանեանն է. Նիքրան Յար. Շահրիկեանը:
3. Jean Jaurès, ֆրանսացի յայտնի ընկերվարական եւ Դաշնակցութեան բարեկամ անձնաւորութիւն:
4. Յաջորդաբար է. Ավնուհի եւ Ա. Ահարոնեան:
5. Անընթեռնելի բառ:
6. Ռուսերէն, առհասարակ անընթեռնելի բառեր:

Նամակ թիւ 9

Փաստ. 48-3 (թթ. 68-69)

Վիշապ (1)

24-ին Յունիսի [1905]

Կովկասից վերջին լուրը: Մեծ թուով քիւրտեր անցել են պարսկական սահմանը եւ միացած տեղական թուրքերին, սկսել են ասպատակութիւններ Երեւանեան նահանգում: Խանութալար եւ սահմանագլխի ընդհարումները: Ժամանակաւոր խաղաղութիւն:

Ռուբինան հիմա, յուսով ենք, այդտեղ հասած լինի: Լաւ կ'անի, եթէ «հիւանդ» ձեւացնի, տնից շատ դուրս չգայ: Պետ. Վիետմսկի[ում] (2) պարզապէս գրուած է, որ Սոֆիայի դէպքից յետոյ թուրքերը համոզուած են, որ հայերը մի «սիրաբիրիզ» են ուզում անել Պոլսում: Եթէ այդպէս է, զարմանում ենք, որ Քրիստիմ[?] չեն հետեւում: Այդքան էլ ապշութիւն!... Յամենայն դէպս, պէտք է խիստ զգուշութիւն, գրքերի [?] հետ շատ չշփուել:

Ի միջի այլոց չի՞ կարող արդեօք նա յանձնարարել իր հայրենիքում իր բարեկամներին, որոնք գուցէ կարողանան մեզ օգտակար լինել զէնքի գնման եւ փոխադրութեան գործի մէջ:

Խնդրենք յայտնել իրեն, որ Վռամի (3) մասին իր գրած յիշողութիւնները շնորհակալութեամբ ստացանք: Առայժմ կը պահենք:

Ներփակ յետ ենք ուղարկում ձեր մի նամակը, որ այսօր ստացանք Վիետմայից:

Եթէ Ռուբինան պատրաստուելու լինի իր սովորած միւթը, պէտք է գործածելու համար շինել ... թէեւ, ինչպէս այսօր մեզ ասաց մի մասնագէտ, մեր ունեցածներն էլ շատ լաւ են:

Ահա Աշոտի (4) ուզած հաշիւը:

(Գաշիւը չգրուեցաւ):

1. Ռոստոմի գրչով Պոլիս ուղղուած նամակ, Յուցական մարմնին:
2. Ռուսատառ:
3. Վռամշապուհ Քենտիրեան, Քրիստափորի հետ զոհուած ռումբի փորձարկման ընթացքին:
4. Աշոտ Բագրատունի, բուն անունով Եղիկեան, Յուցական մարմնի անդամներէն էր, ինչպէս վերեւ յիշուած Քրիսը (Ֆե-ներձեան):

Նամակ թիւ 10

Փաստ. 89ա-2 (թթ. 241-243)

Մ. Բ. (Թիֆլիս) (1)

5 Յունիսի [1905]

Վարդի խնդիր: Պիոնեանը, ստանալով ձեր

հեռագիրը *regutes-vous* 400 fr. (ինչո՞ւ 400 fr.) de Vard (2), հեռագրում է Վարդին, որից պատասխան է ստանում, թե ոչ մի 400 fr. ոչ մի Արտաազդից չի ստացել: Դրա վրայ մենք հեռագրեցինք Վարդին, որ Թ.-ից ստացած 2.000 ռ. չէք ուղարկի Պիոնեանին: Դրա պատասխանը ստացանք: 2.000 ռ. իր սեփականը (?) կարծելով, նրանով իր պարտքերն է վճարել: Ուրեմն դրա գլխին էլ քար ընկաւ! Զիմա ի՞նչ պիտի անէք. հեռագրեցինք, գրեցինք, կրկնեցինք նամակը. ինչո՞ւ ժամանակին չտասպով կարգադրութիւն չարիք: Զիմա դուք գիտէք, ինչ ուզում էք, արէք, այդ գումարը նրանից առէք, իսկ եթէ յայտնել էք իրեն ժամանակին, եւ նա դիտմամբ զանց է արել, խնդրենք մանրամասը գրել, թէ երբ եւ ինչ էք հաղորդել նրան: Ի դէպ, նախկին գումարը նա չի վստահանում յանձնել դաշնակցական մի որեւէ մարմնի: Նա ուզում է անձամբ ներկայացնել Ընդի. ժողովին իր պատճառաբանութիւններով, ինչպէս մեզ է գրում, իսկ ինչպէս ուրիշ տեղ է խօսում, ուզում է ընդի. ժողով հրախրել, մաքրել Դաշնակցութիւնը եւ ապա յանձնել:

Ապրանքի մի մասը գնուած է, ձեր նշանակած տեղն է ուղարկուած: Միւս մասը քիչ յետոյ: Նաւահ[անգիստ] յայտնել ենք, թէ ում պէտք է դիմել (Petru Garabed, Str. Port, 129): Կարգադրութիւն արէք ստանալու մասին: Ի միջի այլոց ծախողը ասում է, որ պիտակների հետ պէտք է եւ սուլիի էլէմենտի (3) լինեն. մի բան, որ դուք չէք նշանակել: Աւելացնե՞նք, թէ ոչ:

Փոշու մասին գրել ենք, որ Աթ[էնք]-ից ուղարկեն: Այստեղ հիմա չեն ծախում, քանիսին դիմել ենք, մերժում են: Երեւի Գալֆանսի դէպքից յետոյ խստացել են:

Ձեր յանձնարարած երիտասարդը եկաւ. թղթերի կապոցը բերեց. միայն Բարսեղեանի նամակի կէտը չկար: Աւելորդ թուղթ կարծելով, կտրել եւ դէն է զգել, որպէսզի տեղ չբռնի:

Ծրագիրը վաղը վերջապէս կը ստանանք տպարանից: Զարցրէք խմբագրատուններում:

Նաւահանգստից ստացանք վերջապէս մի երկու ցուցմունք. բայց հակառակի պէս երթեւեկութիւնը դադարել է: Յոնանը (4) դրանով է զբաղուած. փող ուղարկեցէք, որ հարկաւոր դէպքում կապուած չմնանք: Մեզ խոստանում են հասցնել Ոսկանապ[ատ](5) եւ այնտեղ մեր ձեռքը յանձնել 500 մաուզ[էր] ատրճանակ համապատասխան թիւ փամփուշտներով: Միայն դրամը կանխիկ են պահանջում, խոստանալով վերադարձնել, եթէ անկարող լինեն ապրանքը ապահովաբար մեր ձեռքը հասցնել: Մենք ու-

զում ենք առաջարկել՝ յանձնել մեզ 100-ական պարտիաներով: Դրա ռիսկը 13.000 fr. կը լինի: Զէկը ուղարկէք Աստուածատուրի անունով, առնուազը 40.000 ռ.:

1. Ռոստոմի ձեռագրով, «ստացուած» ըլլալու նշումով:
2. Ֆրանսերէն Վարդէն ստացա՞ք 400 ֆրանքը: Վարդը՝ Վարդ-Պատրիկեանն է (Արվախի), ծանօթ նիւթական իւրացումի հարցով:
3. Ռուսերէն:
4. Դաւթեան Յոնան:
5. Բագու:

Նամակ թիւ 11

Փաստ. 48-3 (թթ. 77-78)

Վիշապ (1)

9 Յուլիսի [1905]

Լեապովը (2) խնդրում է յայտնել, որ Սաֆոյի (3) առած անցագիրը (4) անունով անպէտք է Ռուսաստանի համար. նրանով կարելի է ապրել միայն արտասահմանում: Դրանով ուրեմն ոչ ոք չզնայ Ռուսաստան:

Անցագիրը վիզա անելու համար դեռ մի յարմար մարդ չգտանք: Թարսի նման հիւպատոսարան միայն այստեղ կայ, ոչ Բեռն եւ ոչ Ցիւրիխ:

Այսօր ուղարկում ենք տպագրուած յայտարարութիւնը: Comités de Mousch դիտմամբ ենք դրել, որպէսզի եթէ դէպքից առաջ թղթերը բռնուեն, գործի մասին չկասկածեն: Ուրեմն ուղարկելուց առաջ չնռանաք կտրել այդ մասը: Տեքստի եւ ստորագրութեան միջեւ մեծ տարածութիւն ենք պահել կնիքի համար:

Մոռացել ենք հարցնել Վռամի (5) հօր հասցէն. յայտնեցէք Ֆիլիպ: Կը գրենք, որ 250 fr. ուղարկեն:

Սպասում ենք ձեր նոր գիւտին:

Կովկասում ռուս կառավարութիւնը սկսել է տատանուել: Բացուել է տաճիկ կառավարութեան մի ծրագիր, որով հայերին կտոտրելով, պիտի աշխատեն Անդրկովկասը զրաւել: Մի մասը այն կարծիքի է, որ պէտք է այս պարագային հայերին զինել. միւս մասը աւելի նպատակայարմար է գտնում թոյլ տալ հայերին կտոտրել, վստահ, որ վերջումը միեւնոյմն է, ռուսները կարողանալու են յետ նուաճել Անդրկովկասը:

Վաղը նամակ կը ստանաք Շամ ուղարկելու համար: Մի ինչ-որ բան կայ այնտեղ. շարունակ գանգատում են իրենց մեծ պարտքերից, իսկ երբ հաշիւ պահանջեցինք, դուրս եկաւ, որ իբրեւ պարտք միայն 350 դր. է նշանակուած:

Ներփակ ուղարկուել է 2 չէկ 6000 + 4000 = 10,000 ֆր., որու 4000ը կը փոխադրէք ինչպէս մախօրօք ձեզ գրուել էր՝ Շամ:

1. Ռոստոմի ձեռագրով Պոլիս (Վիշապ) Ցուցական մարմնին ուղղուած նամակ:
2. Մակեդոնացի յայտնի յեղափոխական առաջնորդ, բարեկամ Դաշնակցութեան:
3. Մարգարեան Մարտիրոս:
4. Ռուսատառ անընթեռնելի անուն. կարելի է կարդալ նաեւ լատինատառ Foreber:
5. Վեամշապուի Քենտիրեան, զոհուած Քրիստափորի հետ ռումբերու փորձարկման ընթացքին:

Նամակ թիւ 12

Փաստ. 89ա-2 (թթ. 246-249)

Մ. Բ. (1)

Յուլ. 15 [1905]

..... (2) հասցէին

Հաստատու եմք մեր Յուլ. 5-ի եւ 12-ի նամակները (առաջինը օրհորդի միջոցով, երկրորդը բանկի): Խնդրում եմք յիշել ձեր նամակներում, թէ մեր որ նամակներն էք ստանում:

Աւետիսին տրուած 1.000 ռ.ի համար դուք բոլորովին զուր էք խնդիր բացել: Դուք պէտք է շատ լաւ իմանայիք, որ Աւետիսը զէնքի փողից ոչ մի պայմանով չէր համաձայնի վերցնել, ուրեմն շատ կտրուկ պատասխան պիտի տայիք: Ցաւալին այն է, որ երեւի բերանից բերան պիտի պտտի, թէ Աւետիսը 1.000 ռ. վերցրել է գնացել: Հիմա քանի որ դրա խօսքը կայ, յանձնէք իսկոյն Համբարձումին 1.000 ռ., թող նա տանի յանձնի Մ. Ա.-ին ասելով, թէ Ս-ն է վերադարձնում Աւետիսի համար վերցրած գումարը: Այդ փողը մենք կ'առնենք Ս-ից, որ արդէն պատրաստ էր տալ բոլորովին ուրիշ աղբիւրից: Թիւրիմացութեան պատճառը երեւի Ս-ն է, որ չի կատարել իր խոստումը եւ ժամանակին չի վերադարձրել Մ. Ազ.-եանին 3 օրով փոխ առած փողը:

Վարդին մենք ուղարկեցինք հետեւեալ հեռագիրը: *Assez de manoeuvres, envoyez immédiatement toute somme. Ստացանք հետեւեալ պատասխանը՝ Pas manoeuvres, mais réalité. Retenez votre langue. Je deteste complotistes. Rompez toute relation* (3):

Քանի անգամ ձեզ եւ Նաւահանգիստ գրեցինք, հարցրինք, թէ ինչ ծանրութեանք, ինչ մեծութեանք լինեն ուղարկուելիք արկղները, ինչ քանակութեանք maximum կարելի է ճանապարհ ձգել ամեն մի նաւով: Այս հարցերին ոչ մի պատասխան...

Հէնց ասում էք՝ ուղարկեցէք:

Պարոյրին (4) յիշած ապաստանի մասին դեռ եւս որոշ բան չի կարելի գրել, պէտք է դեռ սպասել:

Մենշենատվօ-ները (5) այստեղ էլ մեզանից 1.000 fr. պարտք առան: Վիրաւորականը այն է, որ մեզ դիմում են միայն երբ փողի պէտք ունենում: Տալը դժուար է, բայց մերժել էլ չի կարելի:

Այդտեղ կը գայ գուցէ մի վրացի երիտասարդ, Կեռաշիձէ [?] (5) անունով Սակարտվելոյի կուսակցութիւնից: Դա խնդրում էր, որ գէնք տանք Գորու գաւառում գործել ուզող մի խմբի համար, բաղկացած 20-25 հոգուց: Պատասխանեցինք, որ ներկայ պարագաներում այնքան մեծ պահանջ կայ մեր ժողովրդի համար, որ Կովկասի մեր ընկերները չեն համաձայնի նրանց զինել: Շատ շատ գուցէ տան ռումբեր: Դրա փոխանակ առաջարկեցինք որ Թիֆլիզի մէջ կազմուելիք կամ արդէն կազմուած հայկրացական խմբերի մէջ մտնեն: Այդ դէպքում, ասացինք, որ դիւրութեանք գէնք կը ստանան: Դուք էլ մեզանից անկախ նոյն առաջարկութիւնն արեք, եթէ ձեզ ներկայանալու լինի: Գրել ենք Պարիզ, որ մի երկու ատրճանակներ տան նրան իբրեւ նպաստ մեր կողմից, նա յոյս ունի հետը սահման անցկացնել: Ուզում էինք նրան էլ մի չեմոտան ատրճանակ եւ փամփուշտ տալ, ինչպէս տուինք Կրպոյին: Բայց ստանալով սրա նամակը, որով խորհուրդ չէ տալիս այդ միջոցը շարունակել, թողեցինք այդ միտքը:

Յոնանը (6) դեռ աշխատում է Բելգիայում:

Հասցէները աստիկ շփոթում էք. Pension-ներ, անձեր խառնում էք անխնայ: Այսպէս կարող են եւ կորչել:

Pension Depuis-ին պէտք է դնել միայն Ռ-ի անունը, իսկ Pension Bernard-ին միայն Avet-ի: Սիւս երկու նոր հասցէներ: 1) Mlle J. Mourier, Marseille, Boulevard des dames, 38 2) Mlle J. Verdan, Rue de Candolle, 11 Genève.

Դուք էլ հասցէներ տուէք, մանաւանդ հեռագրի համար:

Ուղարկեցէք մի լաւ գրաշար:

1. Ռոստոմի ձեռագիր, «ստացուած» նշումով:
2. Ռուսատառ անընթեռնելի անուն:
3. Ֆրանսերէն. «Վերջ տուէք հնարքներուն. անմիջապէս ուղարկեցէք ամբողջ գումարը»: Ստացուած պատասխանը. «Հնարքներ չեն, այլ իրականութիւն – Ձագեցէք ձեր լեզուն – կ'ատեն դաւադիրները – կը խզեն ամեն յարաբերութիւն»:
4. Հայրուկասպետն է, որ այդ օրերուն Փարիզ էր ուղարկուած զինական գնումներու համար:
5. Ռուսատառ փոքրամասնականները:
6. Դաւթեան Յոնան, որ նոյնպէս զէնքի գնումի համար գացած էր Բելգիա (Պելճիքա):

Նամակ թիւ 13

Փաստ. 89ա-2 (թթ. 250-251)

Նաւահանգիստ (1)

18/VII [1905]

Ստացանք Կրպոյի առաջին նամակը:

Անէն կերպ աշխատեցէք փոխադրութեան գործը կարգադրել նաեւ Նովորոսիյակում: Սրանից յետոյ գործադուլների, խռովութիւնների պատճառով երթելու քիչ ընդհատուելու է: Պահեստի կէտ պէտք է ունենայ:

Դուք դարձեալ ոչինչ չէք գրում, թէ ինչ ձեւի, ինչ մեծութեան, ինչ ծանրութեան սնտուկներ կարող էք ընդունել, եւ քանի հատ անէն մի անգամին:

Չի՞ կարելի արդեօք եկողի հետ ապրանք ուղարկել: Կրպոն ի՞նչ դժուարութիւններ է կրել, եւ այնպիսի դժուարութիւններ Ե՞ն, որոնց առաջն առնել չի կարելի:

Պէտք կ'ունենա՞ք բերդանի եւ մոսիհի փամփուշտի:

Տեղեկութիւններ տուէք այդտեղ անցած դարձածի մասին:

1. Ռոստոմի ձեռագիր, «ստացուած» նշումով:

Նամակ թիւ 14

Փաստ. 89ա-2 (թթ. 251-252)

Նաւահանգիստ (1)

29 Յուլիսի [1905]

Ստացել ենք կոմիտէի նամակը փոխադրութեան նոր միջոցի մասին: Անհամբեր սպասում ենք ձեր դիմումի հետեւանքին: Բայց մի բան ենք խնդրում, այդ տեսակ նամակները երբեք բաց թանաքով չգրել: Բաց գրեցէք միայն այն բաները, որ կազմակերպական գաղտնիք չեն պարունակում:

Ստացանք նաեւ Կրպոյի նամակը: Կ'օգտուենք ուղարկած լուրից:

Աթենքից պատրաստուում է գալ ձեզ մօտ Սարհատը (2), որին մենք առաջարկել ենք զբաղուել փոխադրութեան խնդրով: Նա բաւական յարմարութիւններ ունի, որովհետեւ կապեր ունի յոյն կոնդրաբանդիստների (3) հետ: Եթէ այս պարագան բաւական է, հրաւիրեցէք նրան ձեզ մօտ գալու եւ խօսելու, իսկ եթէ ոչ, սպասէք նրա նամակին եւ յետոյ ըստ այնմ վարուեցէք: Մենք նրան գրել ենք, որ մանրամասը տեղեկութիւն տայ ձեզ իր գալու անհրաժեշտութեան մասին եւ առանց ձեր համաձայնութիւնն ստանալու ճանապարհ չընկնի:

Նրա հասցէն՝ Jean Jacob, Poste Restante, Athènes

Այդտեղից դուք զինուորներ էք ուղարկել Բուլղարիա. գնացածները այնտեղ չեն մնացել. ուրիշ տեղեր են գնացել: Դադարեցրէք ուղարկելը, որովհետեւ զուր տեղից ճանապարհածախս է կորչում:

1. Ռոստոմի ձեռագրով Պաթում ուղարկուած նամակ: Կողքին գրուած «Ստացուած»:
2. Իզմիրի եւ Կիլիկիոյ ծանօթ գործիչներէն, որուն վստահուած էր այժմ գէնքի փոխադրութեան գործը:
3. Մաքսանենգների:

Նամակ թիւ 15

Փաստ. 89ա-2 (թթ. 265-266)

Նաւահանգիստ

Օգ. 11-ին [1905](1)

Յուլ. 18-ից յետոյ ձեզ գրուած է Յուլ. 29-ին եւ Օգ. 3-ին: Ստացանք ձեր 15/VII նամակը: Ստացել ենք նաեւ Կրպոյի երկու նամակները, վերջինը 19/VII գրուած:

Մի անգամ եւս խնդրում ենք ապահովութեան համար կազմակերպութեան գաղտնիքները պարունակող նամակները գրել գաղտնի թանաքով: Բաց թանաքով գրէք միայն այն մասը, որ հրատարակութեան համար է սահմանուած, կամ որի յայտնուելուց գործը չի տուժել:

Նաւերի վրայ մարդ գտնելու նպատակով գնացել էր մեր մի ընկերը, բայց յարմար մարդ չի գտել: Աշխատում են դարձեալ: Մարդ գտանք թէ չէ, իսկոյն կ'ուղարկենք ապրանք: Բերդանի ծայրեր մեզ խոստացել են Գերմանիայում:

Տեղեկութիւններ մեզ հարկաւոր են ոչ միայն տպագրութեան համար: Ձեր թռուցիկը չենք ստացել:

Սարհատի մասին գրել էինք Յուլ. 29-ի նամակով: Դեռ մեր նամակը չստացած, նա բեռքեր է մի նաւ 100 գրա հրացան, 3 մանլիխէր, 60 մաուզէր (երեւի ատրճանակ) 30,000 գրայի եւ 12,700 մաուզէրի փամփուշտ: Ինքն էլ ճանապարհ է ընկնում ձեզ մօտ: Մեզ համար դարձեալ հարց է մնում, ձեր համաձայնութիւնը առե՞լ է նախօրօք, թէ ոչ: Չգիտենք նոյնպէս, որքան յարմարութիւն կ'ունենաք այդ քանակութիւնը մի անգամից ստանալու եւ պահելու:

Եթէ Սարհատը առանց նախօրօք ձեզ հետ պայմանաւորուելու է այդ քայլը արել, խիստ վարուեցէք հետը: Նա մի առանձին ձգտում ունի ինքնագլուխ բաներ անելու: Մանրամասը հաշիւ կ'ու-

գէք եւ հաշուի պատճենը մեզ շուտ կ'ուղարկէք:
Ի՞նչ եղաւ Լեւոնը, որին ուղարկել էիք:

1. Ռոստոմի ձեռագիր, էջին վերը «ստացուած» արձանագրութեանը, ինչ որ պէտք է նշանակէ, թէ գրութիւնը տեղ Պաթում հասած է:

Նամակ թիւ 16

Փաստ. 89ա-2 (թթ. 267)

Վարչաւա (1)

11-ին Օգ. [1905]

Ռուսական փամփուշտներին յարմարեցրած հրացանի մասին սպասում ենք տեղեկութիւններին: Ստանաք թէ չէ, անմիջապէս ուղարկեցէք: Ալեքի նամակը համարեա թէ չկարդացուեց, շատ տեղ չոր գրչով էր գրուած:

Ձեմքի համար այլ եւ այլ տեղերից եկածները թող ժողովուեն, խորհրդակցեն: Գուցէ հնարաւոր լինի գործը յանձնել մի երկուսին:

Սպասում ենք նոյնպէս-ի (2) պատասխանին տրանսպորտի վերաբերեալ:

Շուտով գուցէ անցնի ձեր քաղաքով մեր ընկեր ուսանողներից մէկը: Նրա միջոցով հաղորդեցէք Ա. Բ. գէքի խնդրի վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները, զման եւ փոխադրութեան գործը կանոնաւորելու համար:

Խնդրենք պարզ գրել երկրորդ հասցէն (օրի - որդի):

1. Ռոստոմի ձեռագիր:

2. Ռուսաստան անընթեռնելի անուն:

Նամակ թիւ 17

Փաստ. 89ա-2 (թ. 271)

Նաւահանգիստ (1)

Օգ. 23-ին [1905]

Ձեր ուղարկած յանձնարարականները նաւերի համար այնքան էլ պէտք չեն գալիս: Ինչպէս երեւում է, դուք պարզ չէք հասկացրել խնդիրը:

Վերջին նաւի մարդը, օրինակ, կարծել է, թէ միայն մէկ հատ պէտք է առնել հետը: Այս հանգամանքը աչքի առաջ ունեցէք եւ եթէ հնարաւորութիւն ունեք, խնդիրը ամբողջովին պարզելով, նոր համաձայնութեան եկէք:

Անհամբեր սպասում ենք Սարիատի (2) ուղարկած ապրանքի մասին տեղեկութիւն ձեր կողմից:

Ուզում ենք գործադրել եւ հետեւեալ միջոցը: Նաւի վրայ ունենալ մի մարդ, որը շարունակ գնայ գայ: Ամէն անգամ նա իր հետ կը վերցնի 2-

3 չեմոտան (3), որոնց տակը, կրկնակի յատակի տակ, պահուած կը լինի ապրանքը: Չեմոտանի ծանրութիւնը չի կարող մատնել, որովհետեւ նա յողները իրենք չէ, որ բարձրացնում են: Այս միջոցով կարելի է ամէն անգամին փոխադրել 20 հատ իրենց փամփուշտներով: Եթէ գնալ գալու ծախսը հաշուենք 300 fr., մինչեւ իսկ 400 fr. 20 հատի համար դա թանկ չէ:

Առաջիկայ նաւերով, Օգ. 26-ին (Մեսաժըրի) եւ 30-ին (Պակէ) այդ ձեւով բերելու են. աչքի առաջ ունեցէք: Մի հարց: Սովորաբար գացող ճանապարհորդների իրերը որտե՞ղ են խուզարկում, Բաթո՞ւմ, թէ Սովորսիյսկ: Եթէ Բաթում չէ, ուրեմն կարելի է չեմոտանները պարզապէս լցնել ապրանքով. տոմսակը առնել մինչեւ Սովորոս., բայց իջնել Բաթում, ապրանքը նաւից դուրս անելուց յետոյ: Եթէ այս ձեւը գործնական է, խնդրենք հեռագրէք Oui: Ղեռագրի հասցէն Edouard, Roseraie, 29 (4):

Եկողներից մէկին Կրպոն ճանաչում է: Նրան աշխատէք այդտեղ մի յարմար գործ տալ, իսկ եթէ գործ չգտնուի, յանձնարարեցէք ուրիշ տեղեր: Նա կարող է պէտքական լինել: Երկրորդին առաջինը կը ծանօթացնի, նա պէտք է լինի գնացող եկողը:

Առաջինը կարելի է ամսիս 26-ին դուրս գայ, իսկ երկրորդը՝ 30-ին:

Ստացանք այսօր Կրպոյի երկտողը: Շատ ուրախ ենք յաջող դուրս հանելուն, բայց ինչո՞ւ ծայրերը 2000 են, չգիտենք, մե՞զ են սխալ հաղորդել, դո՞ւք էք սխալուել, թէ բերողն է գլխից վերցրել: Սովորութիւն արեք ապրանքը յանձնողին ստացական տալ, թուելով մանրամասը ստացած ապրանքի տեսակը եւ քանակը:

1. Ռոստոմի ձեռագիր:

2. Չփոթել Գերգ Չաւուշի հետ, որ նոյնպէս ծանօթ էր Սարիատ ծածկանունով: Այս մէկը Լեռնավայրի եւ Իզմիրի գործիչներէն էր, այժմ լծուած զենքերու փոխադրութեան գործին:

3. Ճամբորդական պայուսակ:

4. Ժըմեւ «Դրօշակ»ի հասցէն է:

Նամակ թիւ 18

Փաստ. 89ա-2 (թթ. 276-278)

Նաւահանգիստ (1)

Օգ. 31-ին [1905]

Միամտութեան համար սովորութիւն արեք յայտնել ամէն անգամ, թէ մեր որ նամակներն էք ստացել:

Ձեզ գրուած է Յուլիս 13-ին, 29-ին, Օգ. 3-ին, 11-ին, 23-ին, եւ մի երկու օր արանից առաջ Կրպոյի հասցով:

Ստացանք երեկ Կրպոյի (ամուսնը փոխենք Մարկոս), 21/VII եւ այսօր 10/VIII նամակները: Անատոլիի նաւով ուղարկուած է 10 ատրճ[անակ] եւ 1200 փամփուշտ:

Ինչպէս տեղեկացանք, նախորդ անգամ ուղարկուած ծայրերի թիւը եղել է 2000 եւ ոչ 3000, ինչպէս մեզ էին սխալմամբ հաղորդել: Մի ճար տեսէք, որ բերողները չգողանան, գուցէ կարելի լինի մարդ դնել ապրանքի հետ, կամ գրաւական վերցնել առաջուց: Բերդանի մասին դեռ դրական պատասխան չունենք: Մի հարց. կարո՞ղ էք արդեօք ապրանք հանել ռուսական նաւերից: Եթէ այո, այդ դէպքում կարելի է Բուլղարիայից էլ Պոլսի առաջով անցնող նաւերից օգտուել: Եկողներ միշտ լինում են. նրանց միջոցով կարելի է ապրանք ուղարկել: Եթէ հնարաւորութիւն ունէք, հեռագրէք Bon: Հակառակ դէպքում՝ Non: Գուցէ անմիջապէս այդ գծով ձեզ բերդանի փամփուշտ հասցնենք: Մի երկու մարդ նաւահանգիստը սպասեցնում ենք այնտեղ: Ուրեմն հեռագիրը չուշացնէք:

Իմացանք, որ նաւերը նայում են Բաթումում: Զ-ը մնաց, չզնաց 30-ի նաւով: Նա սպասելու է Արտաշէսիին հասնելու լուրին: Եթէ յաջող լինի, հեռագրեցէք ուղղակի Վրթանէսին (3): Lettre écrite (4) եթէ վտանգուի ինքը եւ ապրանքը՝ écrite, եթէ միայն ապրանքը վտանգուի – lettre.

Չեմոտանների կրկնակի պատերի արանքում տեղաւորելը շատ անյարմար է եւ թանկ: Չենք կարծում, որ մաքսատնով յաջողութեամբ անցնի: Մենք համարեա թէ համոզուած ենք, որ եթէ չկարողացաք Արտ.-ի բերած ապրանքը հանել մինչեւ մաքսային գործողութիւնները, Արտաշը անպատճառ կը վտանգուի: Իսկ եթէ հնարաւորութիւն ունէք ապրանքը հանել նախօրօք, այն ժամանակ ինչ իմաստ կայ պատերի արանքներում թաքցնել, քանի որ կարելի է ուղղակի պարկերի եւ չեմոտանների մէջ լցնել: Ուրեմն եթէ Արտ.ի բերածը յաջողութեամբ հանեցիք եւ եթէ հնարաւոր էք համարում, որ Զ-ը ուղղակի չեմոտանները կամ պարկերը լցրած ճանապարհ ընկնի, lettre écrite հեռագրին ակելացրէք directe խօսքը:

Ուրեմն սպասում ենք երկու հեռագրի 1) մեզ՝ ռուսական նաւերի մասին եւ 2) Վրթանէսին Զ-ի գալու ձեւը որոշելու համար:

1. Ռոստոմի ձեռագիր:
2. Արտաշէսը (Մերեմճեան) ընդհանրապէս կը յիշուի իր «Թոր-գոմ» ծածկանունով:
3. Վրթանէսը (Ղազարեան) Մարտիլէն առաքումներով զբաղող ընկերն է:
4. Ֆրանսերէն՝ «գրաւոր նամակ» կամ «նամակը գրուած»:

Նամակ թիւ 19

Փաստ. 89ա-2 (թթ. 279-280)

Ոսկանապատ

2 Սեպտ. [1905](1)

Շտապեցէք փող ուղարկել: Զէնքի երկու խոշոր ձեռնարկներ կան, որ մեծ փող են պահանջելու մի անգամից:

Մինչեւ հիմա չունենք Մ. Բ. -ի բանտարկութիւնների մանրամասնութիւնները:

Կոնստանդինը (2) ազատուել է, հիմա արտասահման է:

Քաջազնունու մօտ եկող ֆրանսիացին մեր կողմից ուղարկած թղթակիցն է: Թղթակցութիւնները ընդունելու են Պարիզի մի քանի թերթեր, ի միջի այլոց՝ եւ տարածուած Journal-ը: Ուրեմն հարկ եղած միջոցները ձեռք առէք, եւ որ գլխաւորն է, գտէք նրա համար մի լաւ թարգման մեր տղաներից, որը միաժամանակ լինի եւ առաջնորդ:

Մեզ հաստատապէս ասում են, որ Կովկասի, Լեհաստանի եւ այլ վայրերի ներկայացուցչութեան ծրագիր մշակողը Coubckai-ինը(?) շատ կաշառակեր մարդ է: Հաւատացնում են, որ եթէ մի քիչ ուտացնես, կարելի է ձեռնառու ծրագիր ունենալ հայերի շահերի տեսակետից:

Կրկնում ենք, մեզ ուղարկեցէք ընկերների նոր կեղծ անունների ցանկ, որպէսզի զի հեռագրով կարողանաք յայտնել, թէ ով է բանտարկուած, խուզարկուած:

Մեր տաքսիկը երեւի քիչ կը փոխուի: Արդէն հակայեղափոխական ծայրերը ակելի համարձակ են լաւում: Աւելորդ չի լինի մի ռայոնական ժողով: Այդտեղ կարելի է եւ կազմել մի գործնական ծրագիր այն ուսուցիչների համար, որոնք հիմա ցրուելու են գաւառներում: Գիւղական դատարանները պէտք է վերանորոգել, կոմիտէների կազմը մաքրել: Այն ուժերը, որոնք ներկայումս անհրաժեշտ են, իբրեւ կռուողներ, բայց կազմակերպութեան նորմալ ընթացքում անպէտք կամ վնասակար են, կարելի է մտցնել յատուկ զինուորական մարմինների մէջ, որոնք գոյութիւն կ'ունենան միմիայն ներկայ տագնապակից շրջանում:

Եկեղեցական վերադարձրած գումարներից պէտք է մաս վերցնել զինման գործի համար: Կարող են ասել, որ եկեղեցին կամ վանքը պարտք է արած եղել, հիմա վերադարձնում է:

Իրաւունք ունի ժողովուրդը, որովհետեւ իսկապէս իր դառը կոպէկները տուել է մեղ րուպէներին:

1. Ռոստոմի ձեռագիր:
2. Կոստի Համբարձումեան, ազատ դուրս եկած Իզմիրէն:

Նամակ թիւ 20

Փաստ. 89ա-2 (թ. 281)

Նաւահանգիստ (1)

6 Սեպտ. [1905]

Մեր ֆրանսիացի բարեկամներից մէկը Gabriel անունով գալու է Կովկաս: Օղեսայից դուրս գալու օրը նա հեռագիր է տալու հետեւեալ հասցեով՝ Սարիբէկու Արուֆինովոչու արմեանսկայա ցերկով (2): Հարկ եղած կարգադրութիւնները արէք հեռագիրը ստանալու եւ նրան ընդունելու նախ վրայից: Ինքը բարձրահասակ մարդ է, միրուքը թրաշած: Ձեռքին գուցէ բռնած ունենայ մի ֆրանսերէն թերթ: Բացի ֆրանսերէնից ոչ մի ուրիշ լեզու չի հասկանում:

Սպասում ենք մեր Օգ. 31-ի նամակի պատասխանին:

Բուլղարիայից եկած պէտք է լինեն երկու երիտասարդներ: Ընդունեցէք իբրեւ ընկերների եւ յանձնարարեցէք Մ. Բ.:

Անհամբեր սպասում ենք Շուշուայ եւ Բագուայ դէպքերի մանրամասնութիւններին. ինչպէս է այդտեղի դրութիւնը:

1. Ռոստոմի ձեռագիր:

2. Ռուսերէն, Սարիբէկ Արուֆինովին, հայկական եկեղեցի:

Նամակ թիւ 21

Փաստ. 89ա-2 (թ. 282)

Նաւահանգիստ (1)

11 Սեպտ. 905

31 Օգոստ. եւ 6 Սեպտ. թիւ մեր նամակները կը հաստատենք եւ կը սպասենք ձեր պատասխանին: Օգոստ. 13ի ձեր նամակը ստացեր ենք:

Պիրէ եւ Աբէնք գտնուած պլաթուցիկ] նիւթերու եւ զէնքերու կարելոր մի մասը բռնուած է յունական կառավարութեան կողմէ եւ այնտեղ գտնուող 5-6 տղաքներ բանտարկուած:

Ձենք զիտեր թէ Սարիստը (2) ո՞ր է գտնուում այժմ. եթէ նա դեռ այնտեղ է, Յունաստան չհանդիպի, որովհետեւ զինք ալ փնտռում են. կ'երեւի, արդէն Լեւոնը ձերբակալուած է: Դա մեծ դժբախտութիւն մըն է. չպիտի կարողանանք առայժմ այդ գծէն օգտուել:

Ձ[արեհ]ը հաւանական է, որ շուտով մեկնի Մ[արսէյ]ից. անցագիրը կարգադրուած է:

Ամերիկայէն Գասպար Պօզոյեան անունով մի ընկեր պէտք է գար՝ Երկիր անցնելու. ցոյց տուէք իրեն ձեր բարոյական աջակցութիւնը. Պոզոյեանը քղեցի է:

Նորից կրկնում ենք, որ չմոռանաք իմացնել մեր նախորդ նամակները ստացած լինելնիդ:

1. Յար. Գալֆայեանի ձեռագիր:

2. Իզմիրի եւ Կիլիկիոյ հին գործիչներէն, որ այդ օրերուն կը գբաղէր զէնքի փոխադրութեան գործով:

Նամակ թիւ 22

Փաստ. 48-3 (թթ. 95-96)

Սիրելի (1), [1905]

Հեռագրեցիքք թեզ, որ սպասես նամակի:

Ստիպուած ենք թեզ հաղորդել, որ Կովկասում անցքերը իրանց ծաւալով եւ վտանգաւոր բնաւորութեամբ անցան ամենայոռնտես եմթադրութիւններն անգամ. համարեա ամբողջ մահմետականութիւնը զինուած եւ ոտքի վրայ է հայկական տարրի դէմ, որ անկարող է հանդիսանում դիմագրաւել ամխուսափելի վտանգը՝ զէնքի պակասութեան, թուրքերի բազմութեան եւ որ զլխաւորն է կառավարութեան բռնած նենգամիտ ընթացքի պատճառով: Թուրքերը քաջալելուում եւ զէնք են ստանում տեղական վարչութիւնից: Հայերի դիմադրողական էներգիան ամէն տեղ փշուում է ոստիկանների եւ զօրքի միջամտութեամբ: Այս բոլորը սակայն հեռու են կռուող հայ տարրին յուսահատացնելուց. զինուած խմբերը ամէն տեղ անհաւասար կռիւ տալով են յետ մղում յարձակումները: Դեկավարների ահագին կարիք կայ, որովհետեւ դժուար է ասել, թէ սկսուած կռիւը ու արիւնը ե՞րբ կանգ կ'առնի:

Ինչպէս տեսնում ես, սիրելիս, սա մի կատարեալ եւ անողորմ գոյժ է, որ թեզ հասցնում ենք. այժմ թեզ է մնում կշռադատել եւ որոշել, թէ քո ներկայութիւնն ո՞ր աւելի անհրաժեշտ է: Մեզ թւում է, որ իրերի այս կացութեան մէջ, մանաւանդ որ Արեւելեան Բիւրոյի մի քանի անդամներ էլ բանտարկուած են, առ այժմ դու ահագին դեր ունես խաղալու Կովկասում (2):

Մենք չենք կարող դատել, թէ մինչեւ ո՞ր աստիճան քո ներկայութիւնն առ այժմ անհրաժեշտ է այդ կողմերուն (3), բայց հաւատացած ենք, որ ռուսական հայութեան սպառնացող ահագին վտանգը թեզ կը թելադրի իսկոյն ճանապարհ ընկնել դէպի Կովկաս, ուր Ռոստոմը նոյնպէս շտապեց մի քանի օր առաջ:

1. Մեզի անծանօթ ձեռագրով գրուած այս նամակը անթուակիր է եւ անհասցէ: Հաւանաբար ուղղուած է Ս. Ջաւարեանին, որուն Կովկաս անցնելու առաջարկ ըրած էր առաջին անգամ Ռոստոմ Յունիս 6-ի նամակով: Գրութեան թուականը կարելի է

որոշել մօտաւոր կերպով, Սեպտ. 11-12, քանի վերջաւորութեան կը խօսուի «քանի ձը որ առաջ» անոր մեկնելուն մասին: Ռոստոմի կողմէ ժընեւէն գրուած մեզի ծանօթ վերջին նամակը հակիրճ գրութիւն մըն է, որ ուղղուած է եգիպտոս գտնուող Մարին (Միք. Տր Մարտիրոսեան), կը կրէ 9 Սեպտ. 1905 թուականը (փաստ. 46-109). անկէ ետք ան ծամբայ ելաւ դէպի Կովկաս, ուր զինք կը գտնենք նոյն ամսուան 22ին (Ռոստով):

2. Ս. Չաւարեան Կովկաս պիտի անցնէր անելի ուշ, 1906 թ. Յունուարի վերջերուն:

3. Այսինքն Կիլիկիա, Լեռնավայր:

Նամակ թիւ 23

Փաստ. 89ա-2 (թ. 283)

Նաւահանգիստ (1) 14 Սեպտ. 905

Մեր Օգոստ. 23, 31, Սեպտ. 6 եւ 11 թիւ նամակները կը հաստատենք:

Պիրեա եւ Աթենք պ[աթոցիկ] միւթերու եւ զէնքերու եւ քանի մը տղայոց յոյն կառավարութեան կողմէ ձերբակալուած ըլլալը ձեզ իմացնելով զգուշացուցեր էինք Սարհատը որ Յունաստան չերթայ. կը յուսանք որ մեր նամակը ստանալով հարկ եղածը կը կարգադրէք:

Չ[արեհ]ը երկէ 13 Սեպտ. Չորեքշաբթի առաւօտ մեկնած է Մ[արսէյլ]ից՝ Պաքէի «Իմէրէթ» նաւով: Իրեն հետ վերցուցած է 29 կ[արծ] եւ 4000 ծ[այր] (2): Միջոցներ ձեռք առէք զինք դիմաւորելու եւ ապրանքը ապահով դուրս հանելու:

Սոյն նաւուն մէջն է նոյնպէս Տիկին Յորդանս Դաւթեանը (3):

Ձեր լուրերուն կը սպասենք

- 1. Յար. Գալֆայեանի ձեռագիր:
- 2. Կարծերը ատրճանակներն են, ծայրերը փամփուշտ:
- 3. Յոնան Դաւթեանի զուիցերուհի կինը:

Նամակ թիւ 24

Փաստ. 32-27

Գաղտնի թանաքով գրուած երկու էջնոց նամակ: Վայրը ճշդուած չէ, բայց այդ թուականին, հայթաթարական ընդհարումներու օրերուն Ռոստոմ անցած էր Կովկաս, ուրկէ Թիֆլիսէն կամ ուղղակի Դարաբաղէն կը գրէ: Գրութեան մէջ յիշուած Լեւոնը կրնայ Թադեւոսեանը ըլլալ (Չոփուռեան):

9/22 Սեպտ. 1905

Միրելիս,

Չնայած որ այսքան մօտեցել եմ, բայց նոյն անորոշ դրութեան մէջ եմ, ոչ մի լուր դեռ չունեմ:

Ճանապարհը բոլորովին կտրուած է, եւ շատ վատ լուրեր են պատուում: Ասում են թէ Շուշուց մի քանի օմնիբուսներ են ճանապարհ ընկել, բայց եւլախ չեն հասել. հաւանական են համարում, որ տղամարդկանց սպանած լինեն, իսկ կանանց առեւանգած: Մի վրացի թէ ռուս, երկու զինուորով ճանապարհ են ընկնում եւլախից, բայց անհետ կորչում են:

Լսեցի, որ Լեւոնն էլ հիւանդացել է, երեւի դէպքերը շատ վատ են ազդել: Դժբախտութեան զլխաւոր պատճառը սաստիկ քամին է եղել, որ հրդեհը տարածել է ահագին տեղ: Երեւակայիր, նոյն քամին Բալախանում նպաստել է թուրքերին: Այնպէս որ թուրքերը հաւատացած են եւ տարածում են, թէ Աստուած իրենց հետ է:

Ինձ նման շատերն են սպասում լուրերի:

Եթէ մի բան իմանամ, կը հաղորդեմ:

Առ այժմ ցտեսութիւն:

Քո Ռ[ՈՍՏՈՎ]

Նամակ թիւ 25

Փաստ. 16-22

Արեւելեան Բիւրոյի թղթածրար:

Կովկասէն գրուած նամակ է, 4 էջ 2 Մարտ 1906

Սիրելիք,

Այսօր ստացայ Վրէնի(1) (?)այսպէս կոչուած երկար նամակը: Կարծերի մասին իմ գրածը միթէ՞ չէք ստացել: Պէտք է համաձայնութեան զալ տեսակների վերաբերեալ Ոսկանապատի(2) հետ: Ինձ վրայ սառը շուր թափեցին այստեղ. բանից դուրս եկաւ, որ բոլորովին զուր տեղից էինք իրար անցել: Կարծերից(3) ունէին մեծ քանակութեամբ, եւ երբեք դժուարութիւն չէին կրում նորերը ձեռք բերելու: Փողի մեծ պակասութիւն կայ ամէն տեղ. թէ այստեղ եւ թէ Ոսկանապատ պարտքերով են գործ տանում. երեւի նոյնն է ուրիշ տեղերում էլ: Եկամտուտի աղբիւրները համարեա թէ դադարել են տնտեսական քայքայման պատճառով. իսկ ծախքերը մեծ են: Մ[եծ] Ք[աղաք](4) հասնելով խորհուրդ կ'անենք մի քանի միջոցների մասին:

Տակայշվիլին(5) շնորհիւ մի քանի պատճառների, որ դեռ վերջնականապէս չեն պարզուած, փոխեց իր ընթացքը: Դեռ նոր է, որ հեռագիրներով բանտարկել էր տալիս աջ ու ձախ հայեր: Քաղաքումս բռնեցին Լեւոն Աթաբէկեանին, ուզում էին բռնել եւ Ա. Մաշուրեանին(6), բայց չնայած բոլոր խիստ միջոցներին, ձեռք ձգել չկարողա-

ցան. բանտարկեցին նաեւ մի քանի արհեստաւորներ: Առաջուանից բռնուած էին Խանքենի(7) ճանապարհի վրայ մի խումբ հայեր, որոնց մէջն էին ուսանող Յանքարծուն Սելբունեան, ուսանողացու Ռուբէն Իւզբաշեան, Իշխան Միրզաբէկեան: Նրանք մեղադրուած էին իբրեւ յեղափոխականներ եւ ասպատակային խմբի անդամներ: Լեւոնին եւ Մաշուրեանին մեղադրուած էին իբրեւ թալանչիներ եւ հրծիգներ(8): Բողոքների ազդեցութեան տակ Լեւոնին եւ նրա հետ միասին Յանքարծունեանին ու Ռուբէնին արծակեցին բանտից: Պատճառը գուցէ անմիտական էր: Բայց Տակայշվիլին իր կողմից կարգադրել էր 48 ժամուայ ընթացքում հեռացնել երեքին էլ նահանգի սահմաններից: Հազիւ էին տուն հասել, քիչ հանգստացել երբ զիջերը ժամը 1-ին յանկարծակի գնում են Ռուբէն Իւզբաշեանին նորից ձերբակալելու, այս անգամ քննիչի կարգադրութեամբ, իբրեւ քրեական յանցաւորի: Ռուբէնը բարեբախտաբար տանը չի լինում. դրանով ազատուած է, եւ մինչեւ հիմա լոյս աշխարհ չի երեւում: Այս երկրորդ փորձը չափազանց զոգոնց տեղիս երիտասարդութեանը, որովհետեւ այս բոլորը կատարուած է թուրքերի անընդհատ դրոնումներով: Սրանց մէջ կազմակերպուել է մի խումբ, որը անվերջ կլաւզներով(9) հանգստութիւն չի տալիս հայերին: Մէկին բռնել են տալիս իբրեւ մարդասպանի, իսկոյն շարուած են ի հարկէ վկաները, որոնք իրենց աչքով տեսել են այս ինչ փողոցից, այս ինչ պատուհանից: Միւսին իբրեւ հրծիգի, երրորդի ձին են բռնում եւ վկաներով հաստատում, որ ձին այս ինչ թուրքին է պատկանում, այս ինչ թուրքից է գնուած եւ այլն: Կաշառուած քննիչը, ձեռքին ունենալով «քաղաքացիների» ցուցմունքները, պարտականութիւն է համարում ձերբակալութիւններ անել եւ այլն: Թուրքերը պատրաստել են «հայ կոմիտէի անդամների» մի ամբողջ ցանկ, որ ներկայացնում են արմինիստրացիային, բռնել են տալիս, վրաները հազար տեսակ ամբաստանութիւններ բարդում (միշտ ի հարկէ վկաներով) եւ գործին քրեական կերպարանք տալիս: Կազմակերպութիւնը ստիպուած եղաւ մտածել իր միջոցների մասին, բայց այս պատրաստութեան շրջանում յանկարծ մի ինչ որ փսփսուք է տեղի ունենում, Տակայշվիլին հրաւիրում է իր մօտ Լեւոն Աթաբէկեանին, հազար ներողութիւն խնդրում եւ պատրաստականութիւն ցոյց տալիս կատարել

երիտասարդութեան բոլոր պահանջները: Գլուխները ինչ ցաւացնեմ, Լեւոնի ներկայացրած ցանկի հիման վրայ, արծակուած են բոլոր բանտարկեալներին: Տակայշվիլին հիմա ամբողջ մեղքը դնում է թուրքերի վրայ եւ խոստանում է նրանց վերաբերեալ ձեռք առնել մի շարք ճնշողական միջոցներ:

Ստիպուած եմ վերջ տալ նամակիս, փոստի ժամանակը անցնում է: Եթէ կանոնաւոր չեմ գրում, դրա պատճառը գրուելիք նիւթերի առատութիւնն է: Ժամանակ չկայ նստելու եւ անփոփոխելու:

Գաւառների դրութիւնը զոհացուցիչ է: Սօսի կռիւր անելի քան փառաւոր է եղել: Վարդանը(10) երէկ վերադարձաւ գաւառից (Վարանդայից) բողոքովին զոհ սրտով: Հետեւեալ փոստին մանրամասնութիւններ կը հաղորդենք:

Համբոյրներով
Ռ.

Տիգրանի կռիւների, Ասկարանի, Աւտալի, Գիւլափուլի նկարագրութիւնները ստացած կը լինենք:
Ռ.

1. Կրէն Գասպարեան, ծանօթ Տաշրացի ծածկանունով, Տրպիզոնի գործիչներէն:
2. Ոսկանապատը Պաքուն է:
3. Կարճ ատրճանակ:
4. Մեծ քաղաքը Թիֆլիսն է:
5. Տակայշվիլի Գանձակի վրացի նահանգապետը, քրոջորդին Պաքուի տիրահռչակ նահանգապետ Նակաշիձէին: Երկուքն ալ պիտի ահաբեկուէին Դաշնակցութեան կողմէ:
6. Ա. Մաշուրեան, որ իբրեւ Այգեստան-Գանձակի պատգամաւոր պիտի մասնակցէր Չորրորդ Ընդհ. ժողովին:
7. Խանքենը այժմու Ստեփանակերտն է:
8. Բնագրին մէջ ռուսերէն:
9. Զրպարտութիւններով:
10. Վարդանը Խանասորի Վարդանն է, Սարգիս Սեփրաբեան, որ հայ-թաթարական ընդհարումներու շրջանին կը ղեկավարէր Ղարաբաղի կռիւները:

Նամակ թիւ 26

Փաստ. 16-27

Արեւելեան Բիւրոյի թղթածրար: Հաւանաբար Թիֆլիս գրուած նամակ է, ուղղուած Կարսի Կ. Կոմիտէին: Թուականը՝ հաւանաբար 1906 թ. Նո-

յեմբերի վերջերը: Հարցը կը վերաբերի դաշնակ-
ցական զինուորները ցրուելուն:

Ընկերներ,

Չենք հասկանում, ինչպես է, որ այստեղից
զինուորներ հետզհետեւ ուղարկւում են, բայց թիւ-
ը աւելանում է: Մեզ թւում է, որ ներկայումս ձեր 50
զինուորների մէջ կան այնպիսիները, որոնք ուրիշ
տեղերից, ծախսեր ստացած, հաշիւները վեր-
ջացրած, ձեզ մօտ են եկել: Պէտք է այդպիսինե-
րին զատել: Բացի այդ, այն ահագին գումարը, որ

պէտք է տալ դրանց հաշիւները փակելու համար,
բաւական է որեւէ ձեռնարկ սկսելու համար: Մու-
րատը աշխատում է Կաղզուանի ճանապարհի շի-
նեղը վերցնել՝ մեր տղաներին համար գործ մա-
տակարարելու: Եթէ աչքի առաջ ունէք մի ուրիշ
ձեռնարկ, յայտնեցէք: Աւելի լաւ է, փողը ծախ-
սենք այնպէս, որ մեր տղաները պարապ չմնան:

Ընկ. բարեւներով՝
ՌՈՍՏՈՍ

1. Միք. Վարանդեանին:

ՎԱՆԵՐՆԵՐԻ

թիվ 2(27) հուլիս-սեպտեմբեր 2009

ՎԻՄ համահայկական հանդես